

Արձանագրություն հ. 4

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
30.05.18 թ. կայացած նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 32-ը:

Օրակարգում՝

1. <<Աշխարհագրական տեղեկատվական համակարգի վրա հիմնված ջրային ռեսուրսների մատակարարման և սպառման հիմնախնդիրները>> (զեկուցող՝ ֆիզ.մաթ.գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Կարապետյան):
2. Հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի լսարանային պարապմունքները 12 շաբաթյա գրաֆիկով իրականացնելու մասին հարցը (զեկուցող՝ դեկանի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ.Ներսիսյան):
3. Առկա ասպիրանտների ատեստավորում (զեկուցող՝ ամբիոնների վարիչներ):
4. Կուրատորների հաշվետվություն:
5. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցը գիտական զեկուցում էր: Դոցենտ Ա.Կարապետյանը ներկայացրեց ջրային ռեսուրսների կառավարման աշխարհագրական տեղեկատվական համակարգի վրա հիմնված մոդելը: Զեկուցման շուրջ ծավալվեց հետաքրքիր գիտական բանավեճ, գիտխորհրդի անդամներ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Գ.Ղարիբյանը, պրոֆեսորներ Հ.Սարգսյանը, Վ.Բոստանջյանը, Ռ.Գևորգյանը, Ա.Առաքելյանը, Մ.Միքայելյանը, դոցենտներ Գ.Հայրապետյանը, Գ.Տոնոյանը իրենց մոտեցումներն արտահայտեցին զեկուցման հիմնախնդիրների վերաբերյալ:

Որոշեցին զեկուցումն ընդունել ի գիտություն նաև առաջարկվեց վերամշակել նյութը և ավելի կատարելագործված տեսքով ներկայացնել ապագայում:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց դեկանի տեղակալ Ա.Ներսիսյանը: Նա խոսեց ֆակուլտետում հեռակա ուսուցման 12 շաբաթյա գրաֆիկով կազմակերպման նպատակահարմարության մասին և առաջարկեց հաստատել այն:

Նիստը որոշեց հաստատել նշված առաջարկությունը:

Օրակարգի 3-րդ հացի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները: Նրանք ներկայացրեցին իրենց ամբիոնների առկա ասպիրանտների մեկ տարվա կատարած աշխատանքները և առաջարկեցին ատեստավորել նրանց: Ատեստավորման քաղվածքները ներկայացվում է ասպիրանտուրայի բաժին:

Նիստը որոշեց հաստատել ամբիոնների որոշումները:

Օրակարգի 4-րդ հացը վերաբերվում էր կուրատորների աշխատանքին: Ամբիոնների վարիչները ներկայացրեցին կուրատորների հաշվետվությունները և նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ ամբիոնների որոշումները, ըստ որոնց կուրատորների մեկ տարվա կատարախ աշխատանքը գնահատվել է բավարար:

Նիստը որոշեց հաստատել ամբիոնների որոշումները:

Ընթացիկ հարցերի շրջանակում հաստատեցին կառավարման և գործարարության ամբիոնի երկու նորընդունված հայցորդների գիտական դեկավարները և ատենախոսության թեմաները (քաղվածքները ներկայացվում է ասպիրանտուրայի բաժին):

Գիտխորհրդի նախագահ,
ու.գ.դ., սլլոֆետար



Հ.Լ. Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղար,
ու.գ.թ., սլլոֆետար

Ա. Հ. Համբարձումյան